

Մհեր Ա. Հարությունյան

mherharout@gmail.com

ORCID: 0000-0002-0719-8860


ՍՅՈՒՆԻՔԻ ԳՈՅԱՄԱՐՏԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՄԲՈՂՋԱՅՈՒՄԸ

Սիմոնյան Աշոտ, Սյունիքի 1917–1921 թթ. գոյապայքարի հուշամատյան, Եր., Սյունիքի հայագիտական հետազոտությունների կենտրոն, 2025, 1056 + 48 էջ ներդիր¹:

Անփոփում

Սյունիքի 1917–1921 թթ. զինված ինքնապաշտպանության և քաղաքական գոյապայքարի իրադարձությունները զբաղեցնում են առանցքային տեղ հայոց նորագույն պատմության մեջ, սակայն դրանց պատմագրական լուսաբանումը երկար ժամանակ մնացել է մասնակի, անհամաչափ և աղբյուրագիտական առումով սահմանափակ:

Այս ժամանակաշրջանը հաճախ մեկնաբանվել է ընդհանրական քաղաքական սխեմաների շրջանակում՝ անտեսելով տեղական առանձնահատկությունները, տարածաշրջանային դերակատարներին, ինչպես



ՎԼԻ համահայկական հանդես, ԾԷ (ԻԳ) տարի, թիվ 4 (92), եռլետեմբեր-դեկտեմբեր, 2025

¹ Գիրքը 2012 թ. հիմնված «Սյունիք-Վայոց Ձորի հոգևոր և պատմամշակութային ժառանգություն» մատենաշարի 13-րդ հատորն է: Գրախոսությունն ընդունվել է տպագրության 15.12.2025:

նաև զինված դիմադրության, պետականաշինական փորձերի ներքին շարունակականությունը (Հարությունյան 1984, 318, 325-330, Խուդավերդյան 1988, 64-71, 115-124, 146-157, Գրիգորյան 1989, 73-88, Աբրահամյան 2003, 209-252, Սիմոնյան 2004, 19-32): Այս համատեքստում Աշոտ Սիմոնյանի «Սյունիքի 1917-1921 թթ. գոյապայքարի հուշամատյանը» հանդես է գալիս որպես նշանակալի աղբյուրագիտական և պատմագրական ձեռքբերում:

Գրախոսվող աշխատությունը դասական իմաստով մենագրություն չէ: Այն փաստավավերագրական-պատմական ընդարձակ մատյան է, որը համադրում է տպագիր և անտիպ նյութեր: «Հուշամատյան» ժանրային սահմանումն արդարացված է, քանի որ հեղինակը խուսափել է տեսական ընդհանրացումներից և առաջնահերթություն է տվել փաստական նյութը հաջորդական, ժամանակագրականորեն ճշգրիտ ներկայացնելուն: Աշխատության հիմնական մասը կազմված է 48 գլուխներից, որոնք միավորված են յոթ թեմատիկ բաժիններում, իսկ դրանց հաջորդում են 12 գլուխներից բաղկացած հավելվածներ, որոնք էապես ընդլայնում են ուսումնասիրության աղբյուրագիտական հենքը:

Աշխատության գլխավոր արժանիքը նրա լայնածավալ և մանրակրկիտ հավաքված աղբյուրագիտական շտեմարանն է: Հեղինակը օգտագործել է Հայաստանի ազգային արխիվի նյութերը, այդ թվում՝ բռնադատվածների քննչական գործերը, Բեյրութի և Բոստոնի հայկական արխիվները, ինչպես նաև հազվագյուտ դատավարական փաստաթղթեր, մասնավորապես Թավրիզում տեղի ունեցած երկու՝ Լեռնահայաստանի անկման և 1920թ. մարտ-ապրիլին Արցախի ինքնապաշտպանության ձախողման հետ կապված դատավարությունները:

Առանձնահատուկ կարևորություն ունի ՀԱՀ (Համառուսաստանյան արտակարգ հանձնաժողով՝ ՉԷԿա-ՊԲՎ (պետական քաղաքական վարչություն)– ՆԳԺԿ (ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատ) համակարգի բռնադատման ՀԱԱ № 1191 ֆոնդի տասնյակ գործերի մեծաքանակ նյութերի հետևողական ներգրավումը, որոնք գաղափարական ու քաղաքական միակողմանիությամբ հանդերձ պարունակում են արժեքավոր կենսագրական տեղեկություններ, ականատես վկաների ցուցմունքներ և պաշտոնական գնահատականներ Սյունիքի գոյապայքարի մասնակիցների վերաբերյալ: Հասկանալի պատճառներ ունեցող այդ նյութերի զգուշավոր օգտագործումը հնարավորություն է տալիս բացահայտելու ոչ միայն Լեռնահայաստանի քաղաքական գոյապայքարի

ներքին տրամաբանությունը, այլև խորհրդային վաղ բռնաճնշումների մեխանիզմները:

Ուշագրավ տեղեկություններ են պարունակում տեղացի մասնակից-ակնատեսների հուշագրությունները, անտիպ հիշողությունները և տարածաշրջանային (Երևան, Բաքու, Շուշի, Գորիս), ինչպես նաև սփյուռքյան կենտրոնների պարբերական մամուլի հրապարակումները, որոնց շնորհիվ վերականգնվում են Սյունիքի ռազմական, քաղաքական և հասարակական գործիչների, հոգևորականության ու քաղաքացիական բնակչության առանձին ճակատագրերը: Տողատակի ծանոթագրությունների ընդարձակ համակարգը, որ ներառում է կենսագրական տվյալներ և զուգահեռ վկայություններ, աշխատությանը հաղորդում է նաև տեղեկատու բնույթ և զգալիորեն բարձրացնում նրա գիտական արժեքը:

Պատմագրական տեսանկյունից աշխատությունը կարևոր ներդրում է Սյունիքի 1917–1921 թթ. իրադարձությունների նոր մեկնաբանության գործում: Տույց է տրվում, որ 1920–1921 թթ. զինված դիմադրությունը ինքնաբուխ կամ պատահական երևույթ չէր, այլ նախորդ տարիներին սկիզբ առած ինքնակազմակերպման և ինքնապաշտպանության գործընթացների տրամաբանական շարունակությունը՝ պայմանավորված թուրքական, ադրբեջանական, ապա նաև խորհրդային ագրեսիայով: Լեռնահայաստանի գոյամարտը և Գարեգին Նժդեհի քաղաքական ու ռազմական գործունեությունը ներկայացվում են պատմականության (խտորիզմի) սկզբունքով և պետականակերտման տրամաբանության մեջ տեղավորվող պատումներով՝ խուսափելով որոշ հայագի հեղինակների (Ռուբեն 1982, Գեորգեան 1991, 25–48, 85–86, 123–125, Աբրահամյան 1991, 3–14, Նժդեհ 1999) հաճախ նկատվող հուզական զեղումներից:

Առանձնահատուկ նշանակություն ունի խորհրդային բռնադատումների մեկնաբանությունը՝ որպես այլ միջոցներով գոյապայքարի շարունակություն: Սյունիքի ռազմական-քաղաքական վերնախավի, ՀՀ խորհրդարանի անդամների, տեղական ինքնակառավարման մարմինների և հոգևորականության նկատմամբ իրականացված զանգվածային հետապնդումները ներկայացվում են ոչ թե որպես տարերային գործընթաց, այլ՝ նպատակային քաղաքականություն, որը միտված էր Սյունիքում ձևավորված հայկական պետականության ինստիտուցիոնալ հենասյուների քայքայմանը և վերացմանը:

Հավելվածներում գետեղված փաստաթղթերը և կենսագրական դոսյեները էապես ընդլայնում են նախորդ շրջանի ուսումնասիրություններին բնորոշ աղբյուրագիտական սահմանափակ հենքը:

Թեև գրքում նկատվում է առանձին գավառակների (Մեղրի, Սիսիան) իրադարձությունների լուսաբանման անհամաչափություն, ընդգծվում են նյութի ընդգրկման լայնությունը և մատնանշում հետագա մասնագիտական ուսումնասիրությունների հեռանկարները: Գրքում նշմարվում են նաև գիտական ապարատի ձևավորման որոշ տեխնիկական անհամապատասխանություններ, մասնավորապես՝ հղումների, մատենագիտական գրանցումների և ձևաչափային միակերպության հարցերում, որոնք առանձին դեպքերում չեն բխում ներկայիս ակադեմիական չափորոշիչներից: Այդուհանդերձ, նկատված թերությունները չեն նվազեցնում աշխատության ընդհանուր արժեքը: Ընդհակառակը, դրանք ընդգծում են ձեռագրի հետագա կատարելագործման և գիտական շրջանառության մեջ ավելի արդյունավետ ներգրավման հնարավորությունը՝ հատկապես հաշվի առնելով ներկայացված փաստական բազայի բացառիկ տարածքն ու օգտագործված սկզբնաղբյուրների յուրահատկությունը: Աշխատությունը, իր փաստական նյութի ընդգրկմամբ և տարածաշրջանային իրադարձությունների վերակառուցման փորձով, կարող է իբրև ելակետային հիմք ծառայել հետագա մասնագիտական հետազոտությունների, թեմատիկ ընդլայնումների և նոր արխիվային տվյալների ներգրավմամբ կատարվող խորացված վերլուծությունների համար:

Ընդհանուր առմամբ Աշոտ Սիմոնյանի «Սյունիքի 1917–1921 թթ. գոյապայքարի հուշամատյանը» կարևոր ներդրում է հայ պատմագրության մեջ: Արխիվային փաստաթղթերի, հուշագրությունների, մամուլի նյութերի և դատավարական աղբյուրների համադրությամբ այն լրացնում է Սյունիքի պատմության ուսումնասիրության բացերը և միաժամանակ հանդես է գալիս որպես մեր հանրությանն այսօր խիստ անհրաժեշտ պատմական հիշողության վերականգնման ու պահպանման նշանակալի քայլ:

Բանալի բառեր – Սյունիք, գոյապայքար (1917–1921), զինված ինքնապաշտպանություն, Լեռնահայաստան, պատմագրություն, աղբյուրագիտություն, խորհրդային բռնադատություններ, պատմական հիշողություն:

**A SYNTHESIS OF THE HISTORY OF SYUNIK'S
STRUGGLE FOR SURVIVAL**

**Ashot Simonyan. Commemorative Book of Syunik's Struggle for Existence
1917-1921**

Abstract

The events of Syunik's armed self-defense and political struggle between 1917 and 1921 occupy a pivotal place in the modern history of Armenia. Nevertheless, their historiographical representation has long remained partial, disproportionate, and source-wise limited. This period has often been interpreted within generalized political frameworks, overlooking local specificities, regional actors, as well as the internal continuity of armed resistance and state-building efforts [Harutyunyan 1984, 318, 325-330, Khudaverdyan 1988, 64-71, 115-124, 146-157, Grigoryan 1989, 73-88, Abrahamyan 2003, 209-252, Simonyan 2004, 19-32].

In this context, Ashot Simonyan's *Memoir-Chronicle of Syunik's Struggle for Survival, 1917-1921* emerges as a significant contribution, both in terms of source studies and historiographical advancement.

The work under review is not a monograph in the classical sense. Rather, it constitutes an extensive documentary-historical compendium that integrates both published and unpublished materials. The genre designation "memorial chronicle" is justified, insofar as the author refrains from theoretical generalizations and prioritizes the sequential and chronologically accurate presentation of factual material. The main body of the volume consists of forty-eight chapters, structured into seven thematic sections, followed by appendices comprising twelve additional chapters that significantly broaden the source base of the study.

The principal merit of the work lies in its extensive and meticulously assembled corpus of sources. The author makes use of materials from the National Archives of Armenia, including investigative files of the repressed, as well as Armenian archival collections in Beirut and Boston. The source base is further reinforced through the incorporation of rare judicial documents, most notably the records of two trials held in Tabriz: the first concerning the fall of Mountainous Armenia, and the second relating to the failure of the self-defense of Artsakh in March-April 1920.

Of particular importance is the systematic incorporation of extensive documentary materials from the Armenian National Archive, specifically from Fund No. 1191 associated with the repressive structures of the VChK–GPU–NKVD system, complemented by related records from the State Archive of Armenia. Despite their inherent ideological and political bias, these documents contain valuable biographical data, eyewitness testimonies, and official assessments concerning participants in the Syunik struggle for survival. Their consistent use substantially enhances the empirical foundations of the study and contributes to a more comprehensive reconstruction of the historical context. The cautious use of these sources, for understandable reasons, makes it possible to reveal not only the internal logic of the political struggle in Mountainous Armenia (Lernahayastan), but also the mechanisms of the early Soviet repressive practices.

Noteworthy informational value is carried by the memoirs of local participants and eyewitnesses, unpublished personal recollections, and periodical press materials from regional centers (Yerevan, Baku, Shushi, Goris) as well as from the Armenian diaspora. These sources collectively enable the reconstruction of the individual trajectories of Syunik’s military, political, and civic figures, including members of the clergy and the civilian population. The extensive system of footnotes—incorporating biographical references and parallel testimonies—further imparts a reference-like dimension to the work and substantially enhances its scholarly merit.

From a historiographical perspective, the work constitutes a significant contribution to the reinterpretation of the events in Syunik between 1917 and 1921. It demonstrates that the armed resistance of 1920–1921 was neither spontaneous nor accidental, but rather a logical continuation of earlier processes of self-organization and self-defense, triggered by successive Turkish, Azerbaijani, and later Soviet aggression. The struggle of Mountainous Armenia and the political and military activities of Garegin Nzhdeh are presented according to principles of historicity, framed within narratives consistent with state-building logic, thereby avoiding the emotional embellishments often observed in the works of certain Armenian authors [Ruben 1982, Gevorgyan 1991, 25-48, 85-86, 123-125, Abrahamyan 1991, 3–14, Garegin Nzhdeh, *Free Syunik*, Beirut, 1999].

The documents and biographical dossiers included in the appendices substantially expand the source base, which in previous studies of the period had been relatively limited. Although the book exhibits some uneven coverage of events in specific districts (Meghri, Sisian), it emphasizes the overall breadth of the material and highlights avenues for further scholarly research. The work also reveals certain technical inconsistencies in the formation of its scholarly apparatus—particularly regarding references, bibliographic entries, and formatting

uniformity—which in some cases do not fully align with current academic standards. Nevertheless, these shortcomings do not diminish the overall value of the study. On the contrary, they underscore the potential for further refinement of the manuscript and its more effective engagement in academic discourse, especially given the exceptional scope of the factual database and the distinctive nature of the primary sources employed. Through its comprehensive presentation of factual material and its reconstruction of regional events, the work can serve as a foundational basis for subsequent scholarly research, thematic expansions, and more in-depth analyses incorporating newly accessible archival materials.

Particular significance is attached to the interpretation of Soviet repressions as a continuation of the struggle by other means. The mass persecutions targeting the military-political elite of Syunik, members of the Armenian Parliament, local self-government bodies, and the clergy are presented not as random or chaotic occurrences, but as deliberate political actions aimed at undermining and dismantling the institutional foundations of Armenian statehood established in Syunik.

Overall, Ashot Simonyan's *Memoirs of the 1917–1921 Struggle in Syunik* represents a significant contribution to Armenian historiography. By combining archival documents, memoirs, press materials, and judicial sources, the work fills longstanding gaps in the study of Syunik's history while simultaneously serving as an important step toward the restoration and preservation of historical memory—a task that remains highly relevant for our society today.

Keywords - Syunik, Struggle for survival (1917–1921), Armed self-defence, Mountainous Republic of Armenia, historiography, source studies, Soviet repression, historical memory.

Мгер А. Арутюнян

ОБОБЩЕНИЕ ИСТОРИИ БОРЬБЫ СЮНИКА ЗА СУЩЕСТВОВАНИЕ

**Симонян Ашот. Памятная книга борьбы Сюника за существование
1917-1921 гг.**

Резюме

События героической самообороны Сюника 1917–1921 гг. занимают важное место в новейшей истории армянского народа, однако их историогра-

фическое освещение в течение длительного времени оставалось фрагментарным, несбалансированным по причине ограниченности первоисточников.

Этот период часто интерпретировался в рамках обобщённых политических концепций, при этом игнорировались местные особенности, региональные акторы, а также внутренняя преемственность процессов вооружённого сопротивления и государственно-строительных инициатив [Арутюнян А., 1984, 318, 325–330; Худавердян 1988, 64–71, 115–124, 146–157; Григорян 1989, 73–88; Абрамян 2003; Симонян 2004, 19–32]. В этом контексте труд Ашота Симоняна «Памятная книга борьбы за выживание Сюника в 1917–1921 гг.» предстаёт как значимое историографическое достижение.

Рецензируемая работа не является монографией в классическом смысле. Она представляет собой документальный труд, объединяющий печатные и рукописные материалы. Жанровая характеристика «мемуары» оправдана, поскольку автор сознательно избегает теоретических обобщений и отдаёт приоритет последовательному, хронологически точному изложению фактического материала. Основная часть работы состоит из 48 глав, объединённых в семь тематических разделов, к которым примыкают приложения из 12 глав, существенно расширяющие источниковедческую базу исследования.

Главное достоинство работы заключается в её обширной и систематически выстроенной источниковедческой базе. Автор использовал материалы Национального архива Армении, включая следственные дела осуждённых, армянские архивы Бейрута и Бостона, а также редкие судебные документы, в частности материалы двух процессов, проходивших в Тебризе, связанных с падением Горной Армении и с неудачей самообороны Карабаха в марте–апреле 1920 г.

Особую значимость представляет последовательное привлечение материалов из дел фонда N 1191 Архива национальной безопасности Армении (бывшие структуры ВЧК – ГПУ – НКВД) и сопряжённого с ним комплекса документов Государственного архива Армении. Несмотря на присущую им идеологическую и политическую односторонность, данные материалы содержат ценную биографическую информацию, показания очевидцев и официальные характеристики участников борьбы за существование Сюника. Их систематическое использование позволяет реконструировать фактическое измерение событий и существенно расширяет источниковедческую базу исследования. Критический анализ этих материалов, позволяет выявить не только внутреннюю логику политической борьбы Горной Армении, но и механизмы ранних советских репрессий.

Особую ценность представляют мемуары и личные воспоминания местных участников и очевидцев, а также публикации периодической печати региональных центров (Ереван, Баку, Шуши, Горис) и диаспорных сообществ, благодаря которым восстанавливаются подробные характеристики военных, политических

и общественных деятелей Сюника, духовенства и гражданского населения. Обширная система сносок, включающая биографические данные и параллельные свидетельства, придаёт работе характер справочно-исследовательского издания и существенно повышает её научную значимость.

С научно-исторической точки зрения данная работа представляет собой важный вклад в научное осмысление событий 1917–1921 гг. в Сюнике. В ней показано, что вооружённое сопротивление 1920–1921 гг. не было стихийным или случайным явлением, а логическим продолжением процессов самоорганизации, начавшихся в предыдущие годы и обусловленных турецкой, азербайджанской а позднее - советской агрессией. Борьба армян Сюника и политическая и военная деятельность Гарегина Нжде представлены с соблюдением принципа историзма и в контексте государствообразующих процессов. При этом автор избегает эмоциональных интерпретаций, которые характерны для ряда армянских исследователей [Рубен 1982; Геворкян 1991, 25–48, 85–86, 123–125; Абрамян 1991, 3–14; Нжде 1999].

Особое значение имеет интерпретация советских репрессий как продолжения борьбы за существование иными средствами. Массовые преследования военного и политического руководства Сюника, членов парламента Республики Армения, органов местного самоуправления и духовенства представлены не как стихийный процесс, а как целенаправленная политика, направленная на подрыв и ликвидацию институциональных опор армянской государственности, сформировавшихся в Сюнике. Документы и биографические досье, включённые в приложения, существенно дополняют ограниченную источниковедческую базу, характерную для предыдущих исследований.

Хотя в книге отмечается неравномерность освещения событий в отдельных уездах (Мегри, Сисиан), но в то же время подчёркивается широта охвата материалов, которая открывает новые перспективы для дальнейших специализированных исследований. Также фиксируются некоторые технические несоответствия формирования научного аппарата, в частности в части ссылок, библиографических записей, которые в отдельных случаях не полностью соответствуют современным академическим стандартам. Тем не менее, эти недостатки не уменьшают общей ценности работы. Напротив, они подчёркивают возможности для дальнейшего совершенствования рукописи и более полноценного её вовлечения в научный оборот, особенно с учётом исключительного объёма представленного материала и специфики использованных первоисточников.

Работа Ашота Симоняна, благодаря объёму фактического материала и попыткам реконструкции региональных событий, может служить надёжной исходной платформой для последующих профессиональных исследований, тематического расширения и углублённого анализа с привлечением новых архивных

данных. В целом рецензируемый труд представляют собой значительный вклад в армянскую историографию. Сочетание архивных документов, мемуаров, материалов прессы и судебных источников восполняет пробелы в изучении истории Сюника и одновременно является важным шагом в восстановлении и сохранении исторической памяти, имеющей огромное значение для современного армянского общества.

Ключевые слова: Сюник, борьба за выживание (1917–1921 гг.), вооружённая самооборона, Лернааайастан (Горная Армения), историография, источниковедение, советские репрессии, историческая память.

Մուտք

Աշոտ Միմոնյանի² «Սյունիքի 1917–1921 թթ. գոյապայքարի հուշամատյան» աշխատությունը, որը հեղինակի 8-րդ և «Սյունիք-Վայոց Ձորի հոգևոր և պատմամշակութային ժառանգություն» մատենաշարի 13-րդ գիրքն է, իր ծավալով, աղբյուրագիտական ընդգրկմամբ և հավաքչական բացառիկ հետևողականությամբ նորագույն հայ պատմագրության հետաքրքիր ու ուշագրավ ձեռքբերումն է:

Մեծածավալ այս աշխատությունը ոչ միայն ամփոփում է Աշոտ Միմոնյան- հետազոտողի համար նախընտրելի ժամանակաշրջանի՝ հայոց պետականության վերածննդի տարիների պատմության երկարամյա ուսումնասիրությունների արդյունքները, այլև ամբողջացնում է Սյունիքի հաղթական գոյապայքարի փաստավավերագրական հենքը:

1. Կառուցվածքը և բովանդակությունը

Գիրքը մենագրություն չէ, այն կազմված է և՛ տպագրված և՛ անտիպ աշխատանքներից ու արխիվային նյութերից, ժամանակի՝ Բաքվի,

² Գրքի հեղինակը՝ **Աշոտ Միմոնյանը** (ծնվ. 1959 թ. Վայոց Ձորի Արենի գյուղում), հայտնի է որպես հետևողական և մանրակրկիտ հետազոտող: Նրա նախորդ աշխատությունները՝ «Արփա-Արենի Վայոց Ձորի պատմության հոլովոյթուն», «Վայոց Ձոր. 20-րդ դարի քառուղիներում (1914–1921)», «Ռուբէն Աբրահամեան», «Զանգեզուրի գոյամարտի հերոս Խաչատուր Մալինցյան», «Վայոց Ձորի 1930 և 1931 թթ. ապստամբությունները», «Մակուեցի Մեսրոպ», ինչպես նաև **Աղասի Ազիզյանի** հետ կազմած «Զաքար Եօլեան. Անցեալի յուշեր» գրքերը, որոնք արդեն իսկ արժանացել են մասնագիտական գնահատանքի դառնալով արժեքավոր ուղեցույցներ Սյունիքի և Վայոց Ձորի նորագույն պատմության ուսումնասիրության համար:

տեղեկություններ են ներկայացվում տեղական ընտրությունների, նոր իշխանության մարմինների կազմավորման վերաբերյալ:

1918 թ. իրադարձություններին նվիրված հաջորդ մասում հանգամանակից ու մանրամասնորեն ներկայացվում են արևմտահայ գինախմբերի ստեղծման և նրանց Զանգեզուրում հայտնվելու հանգամանքները, այստեղ գավառային նոր իշխանություններին ցուցաբերած ռազմական աջակցության և այլ կարևոր գործունեության դրվագները: Այս ներկայացվում է նրանցից անմիջապես հետո Շուշիի գնդի ու Գանձակի գումարտակի Սյունիքում հայտնվելու, փոքր ինչ ավելի ուշ՝ Անդրանիկի գործախմբի ժամանակ, նրանց հետ համագործակցությամբ Զանգեզուրի ընդհանուր ինքնապաշտպանության կազմակերպումը:

Համակողմանի անդրադարձ է կատարվում ՀՀ կառավարության կողմից 1919 թ. Սյունիքի գեներալ-նահանգապետության ստեղծման ու պետականաշինության փորձերին: Այնուհետև առանց դիմադրության Ադրբեջանի խորհրդայնացումը և դրան հետևած՝ հայ բոլշևիկների օժանդակությամբ Կարմիր բանակի կողմից Արցախի խորհրդայնացումը և Խորհրդային Ադրբեջանի զավթողական գործողությունները, Լեռնահայաստանի գոյամարտը, ՀՀ անկումից հետո «սովետական կացնից» փախստական դարձած ժողովրդի հոգսերը իր վրա վերցրած Լեռնահայաստանի և Գարեգին Նժդեհի քաղաքական ու ռազմական գործունեությունը:

Եվ այսպես՝ գիրքը ընդգրկելով փաստագրական վկայություններով լի գրեթե բոլոր պատմական իրադարձությունները, միաժամանակ բացում է դրանց քաղաքական, ռազմական և սոցիալ-հոգեբանականական ծալքերը, որոնք նպաստեցին սյունեցու ինքնությանը հավատարիմ կարևոր անձանց գործունեությանը և ազգային դիմադրության յուրահատուկ մոդելի ձևավորմանը:

Աշոտ Սիմոնյանի աշխատության գլխավոր արժանիքներից է բացառիկ ընդարձակությամբ աչքի ընկնող աղբյուրագիտական հենքը, մասնավորապես՝ Հայաստանի ազգային արխիվի նյութերը, Բեյրութի «Համազգային»-ի արխիվը, Բոստոնի ՀՅԴ կենտրոնական արխիվից երջանկահիշատակ պատմաբան Հ. Գևորգյանի բերած վավերագրերի պատճենները, նույն արխիվում պահվող՝ 1921 թ. Թավրիզի դատավարության հազվագյուտ արձանագրությունները³, որոնք ուղղակի անփո-

³ Հեղինակը հատկանշել է 1921 թ. Թավրիզում տեղի ունեցած Նժդեհի դատավարության անտիպ մասը, ինչպես նաև Սյունիք-Արցախի այդ ժամանակվա փոխկապակցված իրադարձությունների ներկայացման նպատակով օգտագործած 1920 թ. մարտ-ապրիլ

խարհնելի սկզբնաղբյուրներ են Լեռնահայաստանի հերոսամարտերի, Արցախի ինքնապաշտպանության և Սյունիքի քաղաքական ճակատագրի ուսումնասիրության համար:

Դրանց հավելվել են Լիժնյան դատավարության ժամանակ Ռուսական ժանդարմերիայի կազմած քարտերը (1907–1911), որոնք պարունակում են բազմաթիվ կենսագրական տեղեկություններ և եզակի լուսանկարներ: Առհասարակ, գրքի 48 ներդիր էջերում ներկայացված են մի քանի հարյուր լուսանկարներ, որոնց զգալի մասը առաջին անգամ է հրատարակվում: Դրանք ներառում են Սյունիքի, իսկ առանձին դեպքերում նաև Արցախի զինված և քաղաքական գոյապայքարի առաջատար գործիչների եզակի պատկերներ, որոնց մի մասը մինչ այժմ հանրությանը հայտնի չէր և հանդիսանում է տվյալ անձանց միակ պահպանված լուսանկարային վկայությունը: Լուսանկարների զգալի մասը հեղինակն ուսումնասիրության ընթացքում հայտնաբերել է արխիվային գործերում, մյուս մասը՝ ստացել գործընկերներից, իսկ առանձին նյութեր՝ մասնակցած գործիչների հարազատներից, ընտանեկան անձնական ավբոմներից և մասնավոր հավաքածուներից:

Առաջին անգամ գիտական շրջանառության մեջ են ներգրավվում Զանգեզուրում կարևոր դեր խաղացած մի շարք գործիչների կենսագրական ու պատկերագրական նյութերը, այդ թվում՝ Տաթևի ռազմական հրամանատար Վարդան Մանգասարյանի, գորիսցի գործիչներ Արսեն Պարոնյանի, Արսեն Մալինցյանի, Ավետիս Դադունցի, Արտաշես Պարոնյանի, Մակար Հակոբյանի, Ալեքսանդր Օրբելյանի, Մեղրիի պաշտպանական ուժերի հրամանատարներից՝ գնդապետ Միքայել Մելիք-Օհանջանյանի, Սիսիանից՝ Գևորգ Գրիգորյանի: Ներկայացվում են նաև Արցախում ազատագրական պայքարի առանցքային դերակատարում ունեցած գործիչների եզակի պատկերագրական և փաստավավերագրական նյութերը՝ Կոստյան Աթայանի, Գագա Տեր-Օհանյանի, Ալեքսան Բալասյանի, Զաքար Մեսյանի, Արտեմ Լալայանի, Միշա Արզումանյանի և այլոց մասին:

Այս բացառիկ պատկերագրական շտեմարանի հրապարակումը զգալիորեն ընդլայնում է Սյունիքի 1917–1921 թթ. պատմության ուսումնասիրության աղբյուրագիտական դաշտը, լրացնում առկա բացերը և մի շարք նյութեր առաջին անգամ ներմուծում է գիտական շրջանա-

ամիսների Արցախի ծախողված զինված ինքնապաշտպանության առթիվ Թավրիզի մեկ այլ դատավարության նյութերը, որոնք Հայաստան է բերել երջանկահիշատակ պատմաբան Համլետ Գևորգյանը(Հարությունյան 2021, 5-134):

նության մեջ՝ որպես պատմական հիշողության վերականգնման և փաստական պատկերի ամբողջացման արժեքավոր ներդրում:

Լայնորեն օգտագործված են Զանգեզուրի գավառի տարբեր բնակավայրերի բնակիչների վկայությունները, որոնք պահվում են ՀԱԱ-ի, «Հին բոլշևիկների հուշեր» ժողովածուի և անձնական հավաքածուների մեջ:

Հեղինակը, բնականաբար, չի շրջանցել մասնագիտական հարուստ գրականությունը: Ընդարձակ տողատակի ծանոթագրություններից զգացվում է նաև երկրորդային գրականության, այդ թվում՝ հայ պատմագիտության այլ կարևորագույն հատորների օգտագործումը⁴:

Հեղինակի այս նոր աշխատությունն իր հենքով տրամաբանորեն միահյուսում է տեղական վկայությունները, մամուլի անդրադարձները, պաշտոնական փաստաթղթերը, հերոսամարտերի նկարագրությունները և հարյուրավոր անձնանուններն ու տեղանունները, որոնց մեծ մասի վերաբերյալ տրված են ծանոթագրություններ: Հեղինակը ձգտել է հնարավորինս ավելի ընդարձակ ներկայացնել այլ աշխատանքներում գրեթե անտեսված 1) Սասնա գնդի և այլ արևմտահայ զինված խմբերի Զանգեզուրում հայտնվելու հանգամանքները և նրանց շատ կարևոր գործունեությունը, 2) 1919 թ. Արսեն Շահնազյանի գեներալ-նահանգապետության ժամանակաշրջանի իրադարձությունները:

Հավելված բաժիններում ևս ներկայացված են եզակի նյութեր, որոնք կարևոր լրացումներ են գոյապայքարի պատմության համար:

Առաջին հավելված բաժնում խորհրդային իշխանությունների իրականացրած՝ Սյունիքի գոյապայքարի մասնակիցների լայնածավալ բռնադատությունների պատմությունից ընտրված են հատկապես այնպիսի հատվածներ, որտեղ վկայություններ կան այդ անձանց գոյապայքարին մասնակցելու մասին, ինչպես նաև ներկայացվում են նոր տեղեկություններ և վկայություններ գոյապայքարի մասին:

Հավելված բաժիններում հրապարակվել են ՀՀ Սյունիք նահանգի երեք գեներալ-նահանգապետների հնարավորինս համապարփակ կենսագրությունները, Շմավոն Առուշանյանի անտիպ հուշագրություններից քաղված «Վաղատուր գյուղը Սյունիքի գոյապայքարի տարիներին» հուշապատումը, Հայաստանի ազգային արխիվի մինչև այսօր

⁴ Հմմտ.: Գալոյան Գ. (1999), Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923թթ., Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն: Սիմոնյան Ա. Հ., Զանգեզուրի գոյամարտը (1917-1921 թթ.), Եր.: ԵՊՀ հրատ., 2017, 1096 էջ:

չիրապարակված Լեռնահայաստանի իրադարձություններին առնչվող փաստաթղթերը, վարչական գրագրությունները:

Ինչպես հեղինակն ինքն է նշում՝ շատ ծավալուն չդարձնելու նպատակով, գրքից դուրս է թողել «Սյունիքի գոյապայքարի ռազմաքաղաքական գործիչները» բաժինը, որի պակասը փորձել է լրացնել այդ անձանց մասին հնարավորինս ընդարձակ ծանոթագրություններով:

2. Գրքի պատմագիտական նշանակությունը

Սյունիքի գոյապայքարի պատմությունը ներկայացվում է ոչ միայն ժամանակագրական ճշգրտությամբ, այլև քաղաքական ու սոցիալ-հոգեբանական համատեքստով, որը հաճախ չի երևում այլ ուսումնասիրություններում: Աշոտ Սիմոնյանը առանձնահատուկ ուշադրություն է դարձնում առհասարակ Զանգեզուրի և, ի մասնավորի՝ Լեռնահայաստանի, իրադարձությունների ընդհանրական տրամաբանությանը, Մոսկվայի և Բաքվի քաղաքականությունների ազդեցությանը, տեղական ինքնակազմակերպման և ինքնապաշտպանության մեխանիզմներին, առաջնորդող անհատների կենսագրականների վերականգնմանը, խորհրդայնացումից անմիջապես հետո սկսված համատարած բռնադատություններին, դրանց դեմ ուղղված դիմադրությանը՝ որպես գոյապայքարի շարունակություն:

Հեղինակը ցույց է տալիս, որ 1920–1921 թթ. խորհրդայնացման շրջանում սկսված և մի քանի տասնամյակ շարունակվող զանգվածային բռնությունները ոչ թե պատահական դեպքեր են եղել, այլ հայկական պետականության **Սյունյաց հենքի** ոչնչացման նպատակաուղղված քաղաքականություն:

Գրքում առանձնահատուկ կերպով լուսաբանվում է ՀՀ խորհրդարանի անդամների, Սյունիքի հրամանատարների, տեղական իշխանությունների և հոգևորականության բռնադատությունների պատկերը:

Ուրեմն՝ այս հրաշալի հատորը լրացրել է հայ պատմագրության նախորդ տարիների բացը՝ Սյունիքի 1917–1921 թթ. իրադարձությունների համակողմանի աղբյուրագիտական հենքի պակասը:

Աշոտ Սիմոնյանի կատարած ծավալուն աշխատանքը հիմնականում վերականգնում է գոյապայքարի ամբողջական պատկերը և թույլ է տալիս խուսափել միակողմանի մեկնաբանություններից, ներկայացնել տեղացի գործիչների ու մարտիկների ձակատագրերը՝ անուններով, լուսանկարներով, արխիվային փաստաթղթերով, ինչպես նաև

բացահայտել մոռացված կամ երբեք չհրապարակված հուշագրություններ:

3. Բացթողումներ և թերություններ

Թեև հենց հեղինակն է նկատել, որ հայ պատմագրության կողմից անբավարար են ուսումնասիրված Սյունիքի մյուս գավառակների՝ հատկապես Մեղրի-Արևիքի և Սիսիանի իրադարձությունները և ռազմաքաղաքական գործիչների, հերոսների կերպարները, այս գրքում ևս այդ գավառակները փոքր ինչ անտեսված են, ակնհայտորեն խախտված է Սյունիքի առանձին շրջանների պատմության լուսաբանման համամասնությունը: Ծանոթագրություններում սպրդել են որոշ կրկնություններ, որոնք, անկասկած, անուշադրության հետևանք են: Որոշ շեղումներ կան նաև գիտական ապարատի ձևակերպմանը ներկայացվող ակադեմիական պահանջներից:

Սակայն նկատված բացթողումներն ամենևին չեն նսեմացնում Աշոտ Սիմոնյանի կատարած տքնաջան ու մեծածավալ աշխատանքը, որը կարող է մնայուն տեղ զբաղեցնել հայ պատմագրության անդատանում:

Եզրակացություններ

Աշոտ Սիմոնյանի «Սյունիքի 1917–1921 թթ. գոյապայքարի հուշամատյանը» կարևորելի ներդրում է Սյունիքի նորագույն պատմության աղբյուրագիտության հարստացման և գիտական ուսումնասիրության գործում:

Այն միաժամանակ գիտականորեն հիմնավոր, աղբյուրագիտական առատությամբ եզակի, պատմական հիշողության վերականգնման կարևոր քայլ է, Սյունիքի հերոսամարտի և նրա մասնակիցների արժանապատիվ հիշատակման ու արժևորման կարևոր փաստավավերագրություն:

Աշխատության այժմեական ուղերձն այն է, որ Սյունիքի հայությունը ոչ միայն կարողացավ դիմագրավել և հաղթել օսմանանյան, ադրբեջանական, ավելի ուշ՝ Խորհրդային Ռուսաստանի ու նրա հետ միացած Խորհրդային Ադրբեջանի կանոնավոր բանակների անվեջ հարձակումներին, այլև թեկուզ կարճ ժամանակով, Հայաստանի հան-

12. Մինոնյան Ա. (2004). 1919 թ. նոյեմբերյան կռիվները Գորիսի շրջանում// *Բանբեր Երևանի համալսարանի*, № 2, 19–32:
13. Մինոնյան Ա.(2017). *Զանգեզուրի գոյամարտը (1917–1921 թթ.)*, Եր.: ԵՊՀ հրատ.

Bibliography (Latin Script)

1. Abrahamyan, H. (2003). *Martnchogh Artsakhe 1917–2000 t.t.* Vol. A: 1917–1923. Yerevan, Zangak 97(**in Armenian**).
2. Abrahamyan, H. (1991). Garegin Nzhdehe Syunikum (1919 aghvosts – 1921 hulis)// *Lraber Hasarakakan Gitutyunneri*, № 3: 3–14(**in Armenian**).
3. Galoyan, G. 1999. *Hayastane yev mets terutyunnerə, 1917–1923 t't* [Armenia and the Great Powers, 1917–1923]. Yerevan: Gitut'iwn Publishing House, National Academy of Sciences of the Republic of Armenia (**in Armenian**).
4. Grigoryan, R. (1989). “Pastatght'er Zangezuri 1918–1919 t.t. ink'napashtpanakan kryivneri masin// *Lraber Hasarakakan Gitutyunneri*, № 6: 73–88(**in Armenian**)..
5. Garegin Nzhdeh. (1999). *Azat Syunik*. Beirut(**in Armenian**).
6. Gevorgyan, V. (1991). *Lernahayastani herosamarty (1919–1921 t.t.)*. Yerevan.
7. Khudaverdyan, B. (1988). *Zangezur (1917–1921 t.t)*. Yerevan, Hayastan(**in Armenian**).
8. Harutyunyan, A. (1984). *T'urkakan intervent'sian Andrkavkazum 1918 t. ev ink'napashtpanakan kryivnerə*[A Synthesis of the History of Syunik's Struggle for Survival, 1917–1921]. Yerevan, Haykakan SSH Gitutyun hrat.(**in Armenian**).
9. Harutyunyan, M. (ed.). (2021). *Artsakh'i ev Zangezuri hay azgnabnakut'yan zimvats hasarakut'yan patmagirutyune*//Kachar Yearbook, Book 15: 179–190. Shushi-Yerevan: Kachar Gitakan Kentroni Hratarakch'ut'yun. (Accessed at: [https://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Kacar2006/2021\(15\)_ocr.pdf](https://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Kacar2006/2021(15)_ocr.pdf) (**in Armenian**)).
10. Rubén. (1982). *Hay yeghap'okhagani me mishatakneri*. Vol. E. Tehran(**in Armenian**)..
11. Simonyan, A. (2004). 1919 t. noyemberyan kryivnerə Gorisi shrjanum// *Banber Yerevani Hamalsarani*, № 2: 19–32(**in Armenian**).
12. Simonyan, A. (2017). Zangezuri goyamarte (1917–1921 t't').[Zangezuri's Struggle for Survival (1917–1921)]. Yerevan: Yerevan State University Press(**in Armenian**).
13. Simonyan, A.. 2025. Syuniki 1917–1921 t't' goyapayqari hushamatyan [Chronicle of Syunik's Struggle for Survival, 1917–1921]. Yerevan: Syunik Armenian Studies Research Center (**in Armenian**).